մանակի անդադար մարտ պատերազմի էր 'ի մէջ Ասիացւոց և Եւրոպացւոց և ամենայն կարեւոր տեղիք ամրափակեալ էին։ Եւ ապա պաշարեաց զքաղաքն Տիւրոս, եւ հատեալ զծառատունկս, մեքենայիւք արկանէր 'ի ներքս։ Իսկ ամրականք քաջութեամբ ընդդէմ կացեալ գործեցին վասն մեծ 'ի զօրս Սուլթանին, և 'ի ծովամարտի գերի վարեցին զտորմիղս նաւաց, որոյ վասն խոցեցաւ նա 'ի սիրտ և 'ի հոգի, եւ անճարացեալ դաշինս եդ ընդ իշխանին Անտիոքայ, արձակել նորա զիսլամ գերիսն եւ թոյլ առնել զինուց ամիսս 8։ և ինքն դարձաւ 'ի Պաղեստինայիս 'ի ձմերել եւ 'ի դարմանել զօրս, յորոց բազումք վիրաւորեալ էին։ Զմի մասն ազարանից տաճարական ասպետաց 'ի քաղաքին կարգեաց բնակարան գիտնականաց, և զմի մասն 'ի դպրոց, եւ զտուն եպիսկոպոսին հիւանդանոց։

Գուժ առման Երուսաղէմի դղրդեալ սարսեաց զհամայն Եւրոպա։ կաթուածահար մեռաւ պապն Հռոմայ Ուրբանոս Գ։ և յաջորդք նորին Գրիգոր Ը։ և ապա Կղեմէս Գ։ յորդորեցին զկայսրն Ալմանիոյ Ֆրէտէրիկ շիկամօրուս (պարպրուս)։ զթագաւորն Գաղղիոյ Ֆիլիպ Օգոստոս, զթագաւորն Անգլիոյ առիւծասիրտն Ռիչարտ, և զամենայն ազնուականս և զիղերս եւ զայլս, որոց վստահ էին 'ի քաջութիւնս բազկի իւրեանց, վերստին առնուլ զէն վասն աղատութեան Ս։ Գերեզմանին Քրիստոսի։

Լուեալ Սալահատտինի զայսպիսի պատրաստութիւն Լատինաց և զանհամար բազմութիւնս նոցա, որք դիմեալ գային 'ի վերայ իւր ընդ ծով և ընդ ցամաք, զարհուրեցաւ յոյժ, եւ գրեաց աղերսանօք առ Նասրիտտին Խալիֆայն Պաղտատի և խնդրեաց 'ի նմանէ ձեռն օգնութեան։ այլ նա ոչ միայն անտես արար զխնդիր նորա, այլ և պատասխանւոյ անգամ չարար արժանի, որոյ վասն բովանդակ զօրութիւն նորա յեց եկաց 'ի զօրս Եգիպտոսի, Ասորեաց և Քրդաստանի։

Այլ վասն գալստեան Խաչակրաց բազմութեամբ յարեւելս առաջնորդութեամբ Ֆրէտէրիկ կայսեր Ալմանիոյ, և որդւոյ նորին համանուն հօր իւրոյ Ֆրէտէրիկի, զոր ոմանք Կոնրատոս ասացին, գրելոյ թուղթ Կղեմէսի Գ։ պա-